Հավելված N4
ՀՀ առողջապահության նախարարի
2017 թվականի հոկտեմբերի 31-ի N 48-Ն հրամանի

Հավելված 2.1
ՀՀ առողջապահության նախարարի 2015թ. սեպտեմբերի 17-ի N 49-Ն հրամանով Հաստատված բժշկական օգնության և սպասարկման պետական պատվերի տեղադրման կարգի

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՐԵՔ ՏԱՐՎԱ ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳԻՐ

ՆԱԽԱԲԱՆ

1. ՀՀ կառավարության 2006թ. նոյեմբերի 2-ի թիվ 1911-Ն որոշմամբ նախատեսվեց միավորել Շիրակի մարզային, Սամարիթեր և Գ.Գյուլբենկյանի անվան վիրաբուժական հիվանդանոցները՝ ստեղծելով Գյումրի քաղաքում մեկ բազմապրոֆիլ հիվանդանոց՝ 200 մահճակալ հզորությամբ: Այն շահագործման հանձնվեց 2012թ.-ի նոյեմբերի 23-ին՝ անվանվելով <<Գյումրու բժշկական կենտրոն>> ՓԲԸ:

Նախկին հիվանդանոցները միաձուլելու նպատակն էր մարզում ունենալ ժամանակակից բուժսարքավորումներով հագեցված, համատեղ՝ տարբեր բժշկական ծառայություններ մատուցող մեկ բազմապրոֆիլ հիվանդանոց, ինչը կնպաստեր ազգաբնակչության բուժօգնության մատուցման արդյունավետության բարձրացմանը:

<<Գյումրու բժշկական կենտրոն>> ՓԲԸ նորակառույց շինությունը միաձույլ հիմնակմախքով, բարձր սեյսմակայունությամբ, ժամանակակից հիվանդանոցաշինության միջազգային չափանիշներին համապատասխանող քառահարկ կառույց է, ունի նկուղ:

Հիվանդանոցը գործում է կանոնադրության հիման վրա, ունի գործունեություն իրականացնելու համապատասխան լիցենզիա՝ Կ-ԲՕ-001761՝ տրված 30.11.2012թ.: Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 3834900000 ՀՀ դրամ, ունի 100000 հասարակ բաժնետոմս՝ 38349 դրամ անվանական արժեքով:

Վարչական առումով տեղամասը գտնվում է ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում, Գ.Նժդեհի 3/3 հասցեում: Բնակլիմայական առումով տեղամասը

գտնվում է կլիմայական II-Բ ենթաշրջանում: Շենքի ընդհանուր մակերեսը կազմում է 11276,47 ք.մ., ունի կաթսայատուն 110,87 ք.մ. և պարիսպ՝ 39,3 ք.մ. մակերեսով: Հողամասի մակերեսը կազմում է 1,334376 հա: Հիվանդանոցում ծավալված է 200 մահճակալ, գործում են ստացիոնար 4 բաժանմունք՝

1. Ընդհանուր թերապևտիկ բաժանմունք – 50 մահճակալ
2. Սրտաբանական բաժանմունք – 50 մահճակալ
3. Ընդհանուր վիրաբուժական բաժանմունք – 50 մահճակալ
4. Վնասվածքաբանական բաժանմունք – 50 մահճակալ

Նշված մահճակալների թվում ներառված է վերակենդանացման և ինտենսիվ թերապիայի բաժանմունքը՝ 14 մահճակալով: Հիվանդանոցում գործում է ինվազիվ սրտաբանության ծառայություն և ունի հեմոդիալիզի անցկացման ծառայություն՝ 15 արհեստական երիկամի ապարատով, որը սպասարկում է 54 հիվանդ: Հիվանդանոցը մատուցում է նաև արտահիվանդանոցային նեղ մասնագիտական՝ և լաբորատոր-գործիքային մի շարք ծառայություններ: Հիվանդանոցում ամբուլատոր կերպով սպասարկված հիվանդների թիվը տարեկան միջին կտրվածքով կազմում է 25000 հիվանդ: Գործարար ծրագրի մշակման աշխատանքները կոորդինացնող անձը <<Գյումրու ԲԿ>> ՓԲԸ գործադիր տնօրեն՝ Արմեն Ռուդոլֆի Իսահակյանն է, հեռ. +374 93 77 79 06:

Ներկայացվումէ ընկերության կառուցվածքը՝ սխեմատիկորեն



Ներհիվանդանոցային դեղատուն

ԲԱԺԻՆ Ի. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

<<Գյումրու>> բժշկական կենտրոն ՓԲԸ-ն տարածաշրջանում միակ բազմապրոֆիլ հիվանդանոցն է, որը, բացի Շիրակի մարզից, սպասարկում է նաև Վրաստանի Հանրապետության Ջավախքի ազգաբնակչությանը: Ընկերության առաքելությունը՝ ազգաբնակչությանը որակյալ և մատչելի բուժօգնության մատուցումն է, ընկերության հեռանկարային նպատակն է առկա ծառայությունների առավել արդյունավետ մատուցումը՝ նորագույն սարքավորումների ներդրմամբ և համապատասխան մասնագետների վերապատրաստմամբ: Ընկերությունն ինչպես ներկայումս, այնպես էլ ապագայում վճարովի բուժծառայությունների մասով շարունակական

ուսումնասիրություններ կատարելով շուկայում կվարի ճկուն գնային քաղաքականություն, կկազմակերպվեն բաց դռների օրեր, երբ խորհրդատվությունները կանցկացվեն անվճար, ինչի արդյունքում, կհոսպիտալացվեն բազմաթիվ հիվանդներ՝ ընդհանուր հիմունքներով, իսկ բացառապես վճարովի հիմունքներով կկատարվեն լաբորատոր-ախտորոշիչ և գործիքային հետազոտություններ, ինչն էլ կնպաստի ընկերության եկամուտների աճին: Տարվա ընթացքում կգործեն ճկուն զեղչային համակարգեր, որոնք և՛ կխթանեն ընկերության ֆինանսական մուտքերի աճը և կկանխեն հիվանդների արտահոսքը դեպի մայրաքաղաք:

Գլուխ 2. Ընկերության նպատակները

Մոտ ապագայում կանխատեսվում է <<Սամարիթեր վերականգնողական կենտրոն>> ՓԲԸ-ի միաձուլումը <<Գյումրու բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ին, ինչի շնորհիվ ընկերությունը կունենա նոր վերականգնողական ծառայության մատուցման հնարավորություն, որը կնպաստի ընկերության վճարովի մուտքերի աճին: Այս ծառայության ներդրումը նպատակահարմար է և լավ հնարավորություն է ընձեռնում հիվանդներին՝ տեղում անցնելու վերականգնողական բուժում:

Եվ այսպես, <<Գյումրու բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ն կդառնա համալիր կենտրոն, որտեղ հիվանդները կստանան որակյալ բուժօգնություն, բոլոր խնդիրները կլուծվեն տեղում՝ ունենալով ախտորոշման և բուժման համալիր համակարգ:

Ընկերությունը ենթադրում է վճարովի մուտքերի հնարավոր աճ, ինչպես հիվանդների քանակի ավելացման, այնպես էլ ստվերային եկամուտների նվազեցման հաշվին: Չնայած ազգաբնակչության թվաքանակի նվազմանը՝ ընկերությունը, նոր ծառայությունների ներդրմամբ, որակյալ բուժօգնության մատուցմամբ և ճկուն գնային քաղաքականությամբ փորձում է կայուն պահել դիմելիության ցուցանիշը, ինչը շատ խոցելի է սոցիալապես աղքատ մարզի համար:

Գլուխ 3. Ընկերության գործունեության հիմնական ուղղությունները

<<Գյումրու բժշկական կենտրոն>> ՓԲԸ– ն պետական պատվերի շրջանակներում ազգաբնակչությանն է մատուցում հետևյալ բժշկական ծառայությունները՝

- Հեմոդիալիզի անցկացման ծառայություն
- Անհետաձգելի բժշկական օգնության ծառայություն
- Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություն
- Զինծառայողներին, ինչպես նաև փրկարար ծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին բժշկական օգնության տրամադրման ծառայություններ
- Պետական հիմնարկների և կազմակերպությունների սոցիալակն փաթեթով ապահովման ծառայություն
- Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննություն և բժշկական օգնության ծառայություն
- Սրտի վիրահատության ծառայություն
- Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների մատուցում

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ընկերությունը գրանցել է վճարովի ծառայություններից ստացվող հասույթի աճ՝

- 2017թ. 9 ամիսներ – 273975.1 հազ. դրամ
- 2018թ. 9 ամիսներ – 387281.2 հազ. դրամ

Ընդհանուր վճարովի մուտքերը համապատասխան ժամանակահատվածի համար կազմել են՝ 113306.1 հազ. դրամ:

Ընկերության վճարովի ծառայությունների մատուցման սպեկտրը բավականին լայն և ընդգրկուն է, մատուցվում են տարաբնույթ բժշկական ծառայություններ, ինչպես ստացիոնար, այնպես էլ ամբուլատոր:

Բացի վերը նշված միջոցներից, ընկերությունն իր վճարովի մուտքերի աճն ապահովում է տարբեր կազմակերպությունների հետ կնքված ծառայությունների մատուցման պայմանագրերի շնորհիվ, որոնք ևս ապահովում են վճարովի մուտքերի աճը: Նմանատիպ պայմանագրերը տարեցտարի ավելանում են և ընդգրկում են մատուցման ավելի ու ավելի լայն շրջանակներ:

Այն ինչ վերաբերում է ընկերության այլ գործունեությանը, ապա հարկ է նշել, որ ընկերությունն ունի վարձակալությամբ հանձնած դահլիճ, որն օգտագործվում է տարատեսակ սիմպոզիումների և զանազան կոնֆերանսների անցկացման

նպատակով, ինչպես նաև վարձակալությամբ հանձնած տարածքներ (դեղատուն, սրճարան, բանկ, սննդի խանութ, վճարովի ավտոկայանատեղի):

<<Գյումրու բժշկական կենտրոն>> ՓԲԸ իր կողմից մատուցվող ծառայությունների շրջանակներում սպասարկում է հիվանդանոց դիմած բոլոր հիվանդներին՝ անկախ սոցիալական և ազգային պատկանելիությունից, և բացի Շիրակի մարզի բնակիչներից՝ ի հաշիվ Ջավախքի և Լոռու մարզի ազգաբնակչության, գրանցել է դիմելիության ցուցանիշի աճ:

ԲԱԺԻՆ II. ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Գլուխ 4. Նախորդ պլանային ժամանակաշրջանի նպատակները և խնդիրները

Ընկերության նպատակը հիմնադրման օրվանից մեկն էր. լինել մրցունակ, ճիշտ օգտագործել ունեցած պոտենցիալը, կյանքի կոչել այն բոլոր ծառայությունները, որոնց մատուցման համար բացված օրվանից իվեր եղել են տեխնիկական բոլոր նախադրյալները, սակայն բացակայել են համապատասխան մասնագետները, կամ էլ առկայության դեպքում՝ համապատասխան վերապատրաստումը:

2012 թվականի նոյեմբեր ամսից <<Գյումրու բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ն ծավալեց իր գործունեությունը նորագույն և թանկարժեք բուժսարքավորումներով հագեցված, եվրոպական չափանիշներին համապատասխանող մի կառույցում, որտեղ նախորդ երեք բուժհաստատություններից տեղափոխված անձնակազմով հնարավոր չէր կազմակերպել համապատասխան կանոնակարգված գործունեություն: Հիվանդանոցը համալրվեց անհրաժեշտ բժիշկ մասնագետներով, ինչպես նաև սպասարկող անձնակազմով, ում աշխատանքը ավելի քան անհրաժեշտ էր այսչափ մեծ հիվանդանոցի տարածքի տարաբնույթ տեխնիկական խնդիրների լուծման, կանոնակարգման և պահպանման գործում, մասնավորապես կոյուղագործներ, ջրմուղագործներ, սանիտարներ, տեխնիկներ, բուժսարքավորումների ինժիներներ, էլեկտրիկներ, հնոցապաններ և այլ մասնագետներ, որոնք պատճառ հանդիսացան աշխատավարձի ֆոնդի ավելացման:

Շենքի հարթ տանիքը, որը պատված էր անորակ իզոգամե բարակ շերտով, ինչը հաճախակի անբարենպաստ եղանակային պայմաններից ելնելով վնասվում էր՝ առաջացնելով ջրի ներհոսք շենքի տարբեր հատվածներում:

2014թ-ին, ընկերությունը, հետագա բարդություններից խուսափելու նպատակով, կտուրի ամբողջական վերանորոգման համար իր ֆինանսական միջոցներից տրամադրել է 20727.0 հազ դրամ:

Հիվանդանոցին տրամադրված բուժսարքավորումների մի մասը կարիք ունեին լրացնող սարքավորումների:

Բաժնետոմսերի գրանցման և հաշվառման համար հիվանդանոցն իր ֆինանսական միջոցների հաշվին փոխհատուցել է 3600.0 հազ դրամ:

ԳԼՈՒԽ 5. ՆԱԽՈՐԴ ՊԼԱՆԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Պետության կողմից տրամադրվող գլոբալ բյուջեն յուրաքանչյուր տարեսկզբին նախատեսվում է նախորդ տարվա փաստացի կատարողականից մոտ 100 մլն դրամով պակաս: Այն տարվա ընթացքում բացասաբար է ազդում ընկերության բնականոն աշխատանքների վրա: Նախնական սակավ բյուջեն բաժանվում է ամսական համամասնության, տրամադրվում է ֆինանսավորում՝ կանխավճարային սկզբունքով՝ առաջացնելով ընթացիկ ֆինանսական դեֆիցիտ, քանի որ այդ ընթացքում կուտակվում են մի շարք կրեդիտորական պարտավորություններ, որոնք էլ իրենց հերթին առաջացնում են տարատեսակ տույժ, տուգանքներ՝ իրենց վճարումն ուշացնելու պատճառով (հիմնականում՝ եկամտահարկի և կոմունալ ծախսերի գծով), ինչպես նաև վատթարանում են մատակարար կամակերպությունների հետ փոխհարաբերությունները, քանի որ վերջիններս երբեմն ուղղակիորեն հրաժարվում են մատակարարել ապրանքներ՝ նախորդ մատակարարման դիմաց վճարման բացակայության պատճառով: 4-րդ եռամսյակում, վերանայելուց հետո, բյուջեն ավելանում է, սակայն այդ ընթացքում հասցնում են կուտակվել վերոհիշյալ բազմաթիվ տույժ-տուգանքներն ու կրեդիտորական պարտքերը:

2016թ. ընկերությունը չստացավ համապատասխան փոխհատուցում՝ հեմոդիալիզի անցկացման ծառայության և սրտի անհետաձգելի վիրահատության հոդվածներով իր կատարած աշխատանքների դիմաց: Հեմոդիալիզի անցկացման ծառայության հոդվածով 9538700 դրամ, սրտի անհետաձգելի վիրահատության հոդվածով՝ 8245000 դրամ, (այլ ծառայությունների հոդվածներով՝ 25101751 դրամ

և ընդամենը կասեցումը կազմեց 42885451 դրամ): Այն խիստ բացասաբար ազդեց նախորդ ժամանակահատվածի ֆինանսական ցուցանիշների վրա: Հիվանդանոցի գործունեության ընթացքում երբևէ չէր գրանցվել տվյալ հոդվածներով փոխհատուցման բացակայություն:

Նմանատպ խնդիրների ամենամյա առկայությունը ենթադրում է կրեդիտորական պարտքերի շարունակական աճ և վնասի առաջացում:

2018թ. եկամտի կորստի պատճառ էր նաև ինվազիվ սրտաբանության ծառայության, ինչպես պետական պատվերով, այնպես էլ վճարովի հիմունքներով բուժօգնության և սպասարկման միավորի գնի իջեցումը օր՝ <<Զինծառայողների, ինչպես նաև փիկարար ծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին բժշկական օգնության ծառայություններ>> ծրագրի շրջանակներում 1 դեղապատ ստենտով ստենտավորմամբ ավարտված դեպքը փոխհատուցվում էր 1 600.0 հազ դրամ, ապա 06.09.2016թ.-ից այն նվազեց՝ կազմելով 1080.0 հազ դրամ, եթե վճարովի ծառայությունների շրջանակում նույն ստենտավորումը առանց ստենտի արժեքի կազմում էր 1100.0 հազ դրամ, ապա 05.09.2016թ.-ից այն նվազեց՝ կազմելով 600.0 հազ դրամ:

ԳԼՈՒԽ 6. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՂ և ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Այսպիսով, ամփոփ կերպով ներկայացնենք ընկերության ուժեղ և թույլ կողմերը՝

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐՆ ԵՆ՝

- Մարզում իր սպասարկման և մատուցվող ծառայությունների գծով միակը լինելու փաստը
- Բարձրակարգ մասնագետներ
- Մասնագիտական փորձի փոխանակում արտերկրից ժամանած բժիշկների հետ
- Բարձրորակ տեխնիկական հագեցվածություն, արդի բուժսարքավորումների առկայություն
- Շենքային լավ պայմաններ /միջազգային չափանիշներին համապատասխանող հիվանդասենյակներ/
- 3-րդ մակարդակ ունեցող վերակենդանացման ծառայություն
- Միակը մարզում՝ վնասվածքաբանական և օրթոպեդիայի բաժանմունք և այլն

ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐՆ ԵՆ՝

- Ընկերության թույլ կողմերից մեկն է այն փաստը, որ, որոշ բուժսարքավորումների աշխատանքի խափանման դեպքում, ընկերությունը ստիպված է դրանք նորոգելու համար համապատասխան սարքավորումը կամ դրա վնասված մասը տեղափոխել Երևան՝ համապատասխան մասնագետի մոտ կամ սպասարկող ընկերություն, այն պարզ պատճառով, որ մարզում բացակայում է տվյալ սարքավորման վերանորոգման մասնագետը: Այս պատճառով շատ անգամ կազմակերպությունում պարալիզացվում է այս կամ այն ծառայությունը, և/կամ դրան փոխկապակցված մեկ այլ ծառայություն ևս, ինչի հետևանքով տուժում է թե հիվանդը, թե բժշկական կազմակերպությունը, հետաձգվում է բուժման կամ ախտորոշման ժամկետը:

- Նեղ մասնագետների սակավ քանակ: Այստեղ մասնագետների կարիքը հատկապես զգացվում է այն դեպքում, երբ մասնագետներից որևէ մեկը օգտվում է իր հասանելիք հերթական ամենամյա արձակուրդից, տվյալ ծառայության մատուցումը ժամանակավորապես կասեցվում է, օր.՝ նյարդավիրաբույժ, անոթաբան, պլաստիկ վիրաբույժ, և այլն:

ԲԱԺԻՆIII. ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Գլուխ 7. Ընկերության արտաքին միջավայրում հնարավոր երևույթների կանխատեսում

Ընկերության գործունեության վրա ազդող արտաքին միջավայրի գործոններից են՝

- Գնաճը
- Պետական պատվերի ավարտված դեպքի կայուն գինը
- Նվազագույն աշխատավարձի աճը

Այժմ մանրամասն տվյալ հոդվածների մասին.

Գնաճն այն անխուսափելի տնտեսական երևույթն է, որը բացասաբար է ազդում ընկերությունների բնականոն գործունեության և ֆինանսատնտեսական վիճակի վրա: Պարզ է, որ ընկերությունն այդ դեպքում կունենա ծախսերի ավելի մեծ մասնաբաժին՝ տարբեր բժշկական նշանակության ապրանքներ, սարքավորումներ, քիմիական նյութեր և այլ անհրաժեշտ պարագաների գնման մեջ:

Դիտարկենք գնաճի բացասական ազդեցության մեկ օրինակ:

Բացասական ազդեցություն ունեցող արտաքին գործոն է պետական պատվերի ավարտված դեպքի կայուն գինը, որը, տարիներ շարունակ մնում է անփոփոխ, սակայն ավելանում է բուժծառայությունների մատակարարման համար անհրաժեշտ նյութերի և պարագաների արժեքը, կոմունալ վճարները ևս ավելանում են, և հետևաբար պետպատվերի գնի կայուն լինելը խոչընդոտ է հանդիսանում շահույթի ավելացման համար:

Նվազագույն աշխատավարձի աճը, ինչպես նաև 2016 թվականին՝ դրոշմանիշային վճարի գանձման ներդրումը ևս անմասն չմնաց շահույթի կրճատման գործում: Մասնավորապես այս երկրորդի կտրվածքով, արձանագրենք հետևյալը. ընկերությունն ունի նվազագույն աշխատավարձ ստացող մոտ 180 աշխատակից, որոնց աշխատավարձերից գանձման ենթակա դրոշմանիշային գումարը, որը կազմում է 180.000 ՀՀ դրամ, ըստ օրենքի վճարվելու է գործատուի կողմից: Սա էականորեն ազդում է կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության ցուցանիշների վրա:

<<Գյումրու բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ն ունի մի շարք մրցակցային առավելություններ՝ հանձին իր տարատեսակ բժշկական ծառայությունների մատուցմանը: Այն շուկայում գրավում է առանձնահատուկ տեղ, քանի որ գտնվում է մենաշնորհային դիրքերում՝ իր կողմից մատուցվող տարբեր ծառայությունների գծով, մասնավորապես՝ ինվազիվ սրտաբանության, անոթային վիրաբուժության, նեյրովիրաբուժության, վնասվածքաբանության և օրթոպեդիայի, դիմածնոտային վիրաբուժության, պլաստիկ վիրաբուժության, ուրոլոգիական և 3-րդ մակարդակի վերակենդանացման ծառայությունների մատուցման, ինչպես նաև լաբորատոր-գործիքային հետազոտություններից՝ դուպլեքս, հոլտեր, տրեդմիլ, ԷԷԳ, գաստրոսկոպիկ, կոլոնոսկոպիկ, համակարգչային տոմոգրաֆիկ հետազոտությունների ոլորտում:

Ընկերությունն ունի մի շարք բարձր որակավորում ստացած բժիշկ-մասնագետներ, որոնք բարձրացնում են ընկերության ռեյթինգը և ապահովում ֆինանսական մուտքերի աճ:

2013 թվականին կյանքի կոչվեցին հետևյալ ծառայությունները՝ հեմոդիալիզի անցկացման, տրեդմիլ հետազոտության, ԷԷԳ հետազոտության, դուպլեքս հետազոտության, հոլտեր մոնիտորինգի, լապորոսկոպիկ վիրաբուժության: Այնուհետև, 2014 թվականին գործարկվեց այնպիսի մի ծառայություն, որը աննախադեպ էր Շիրակի մարզում: Այն է սրտի ինվազիվ միջամտության ծառայությունը: Շիրակի մարզի շատ բնակիչներ այլևս ստիպված չէին մեկնել Երևան՝ միջամտությունն իրականացնելու, նրանց տրվեց ժամանակն

արդյունավետ օգտագործելու հնարավորություն, ինչն էլ իր դրական ազդեցությունն ունեցավ հիվանդի բուժման և միջամտության իրականացման գործում, ինչպես նաև, անհետաձգելի դեպքերի պարագայում, երբ տեղափոխումը պարզապես անհնար էր ժամանակային առումով:

ԲԱԺԻՆ IV. ՀԵՌԱՆԿԱՐԱՑԻՆ ՁԱՐԳԱՑՈՒՄ

ԳԼՈՒԽ 8. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ընկերության հիմնական խնդիրներից մեկը, ինչպես նշեցինք, կազմակերպությունում նեղ մասնագետների պակասն է, ինչը հանգեցնում է որոշ ծառայությունների մատուցման ժամանակավոր կանգի:

Այնուհետև, խնդիրներից մյուսն է բժշկական սարքավորումների վերանորոգման անհնարինությունը մարզում, ինչի հետևանքով, բացի այն, որ տեղի է ունենում համապատասխան ծառայությունների մատուցման ժամանակավոր դադար, նաև կատարվում են տեղափոխման լրացուցիչ ծախսեր:

Բացի վերոգրյալ խնդիրներից, նաև խնդիր է հանդիսանում ընկերության ֆինանսական վիճակը, ինչի բարելավման համար անհրաժեշտ է ներդնել որոշ նոր եկամտաբեր ծառայություններ, ավելացնել վճարովի ծառայություններից ստացվող հասույթի չափը, վերանայել ընթացիկ ծախսերի բաշխումն ու քանակը:

Վերջինիս հետ կապված, հարկ է նշել թթվածնի ձեռքբերման նպատակով կնքված պայմանագրերի տարեկան գումարները, որոնք, անհամեմատ կնվազեն, եթե ընկերությունը ձեռնամուխ լինի թթվածնի արտադրման սեփական կայան ներդրմանը, սակայն այս հարցը դեռևս չի գտել իր լուծումը, քանի որ համակարգի ներդրումը ևս պահանջում է լուրջ ֆինանսական ներդրումներ, որոնց համար ընկերությունը դեռևս չունի հատկացված համապատասխան գումար:

Ինչպես նշված էր Գլուխ 5-ում, պետության կողմից տրամադրվող գլոբալ բյուջեն յուրաքանչյուր տարեսկզբին նախատեսվում է նախորդ տարվա փաստացի կատարողականից պակաս: Նախնական սակավ բյուջեն բաժանվում է ամսական համամասնության, տրամադրվում է ֆինանսավորում՝ կանխավճարային սկզբունքով, ինչն էլ առաջացնում է ֆինանսական դեֆիցիտ, քանի որ այդ ընթացքում կուտակվում են մի շարք կրեդիտորական պարտավորություններ, հետևաբար նաև տույժեր, տուգանքներ:

Նոր ծառայության ներդնման համար կխոսվի ստորև ներկայացված գլխում:

ԳԼՈՒԽ 9. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Լուծման ուղիներից մեկը, ինչպես նշեցինք նոր ծառայության ներդրումն է: Այս կտրվածքով, վերին գլխում նշեցինք թթվածնի կայանի ներդրման գաղափարը, սակայն նշեինք որ առկա չեն համապատասխան ֆինանսական միջոցներ:

Այնուամենայնիվ, կատարվել են հաշվարկներ և վերլուծականներ, որոնց արդյունքում պարզ են դարձել հետևյալ տվյալները:

Օրինակ, եթե ներկայումս հիվանդանոցը թթվածնային մեկ բալոնը ձեռք է բերում շուկայական 2300 դրամ արժողությամբ, ապա սեփական թթվածնային արտադրամաս ունենալու պարագայում, հիվանդանոցը թթվածնային մեկ բալոնի վրա կծախսի ընդմանեը 1500 դրամ՝ խնայելով մեկ բալոնի արժեքի մեջ 800 դրամ:

Տարեկան կտրվածքով խնայողության չափը կհասնի մոտ 8000000 դրամի: Բացի այն, որ հիվանդանոցը այդպիսով կհոգա իր ներքին կարիքներն ավելի ցածր գնով, այն նաև հնարավորություն կունենա այլ կամակերպություններին վաճառելու բալոնները շուկայական գնից ավելի ցածր գնով՝ կրկին գրավելով մրցակցային դիրքեր շուկայում և ապահովելով եկամուտների աճ:

Այս ծրագրի իրականացման համար պահանջվոջմ է մոտ 40 մլն դրամի ներդրում: Կատարվող ծախսը հանդիսանում է կապիտալացվող ծախս, սակայն եթե դիտարկենք այն ներդրում-շահույթ տեսանկյունից, ապա ակնկալվող շահույթը, ինչպես նաև ներքին ծախսի կրճատումը տվյալ ասպեկտով կկոմպենսացնեն ներդրված գումարը՝ չորս տարիների ընթացքում:

Ընկերության իրատեսական ծրագրերից մեկն է ՄՌՏ հետազոտության ներդրումը, որը գտնվում է կատարման փուլում և այն կշահագործվի 2019թ. Առաջին եռամսյակում:

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունը նպատակ ունի ներդնել ՄՌՏ հետազոտությունը, ինչի արդյունքում կունենա հասույթի աճ, կկանխվի հիվանդների հոսքը դեպի մայրաքաղաք, ինչն ավելի նպատակահարմար կլինի հիվանդների համար, թե ախտորոշման ժամկետների կրճատվելու, և թե հիվանդին մայրաքաղաք տեղափոխելու տեսանկյունից:

Այն ինչ վերաբերում է մյուս խնդրի լուծմանը, որը հանդիսանում էր նեղ մասնագետների դեֆիցիտը, ապա հարկ է նշել, որ ընկերությունը մի քանի անգամ հայտարարել է մրցույթ՝ համապատասխան նեղ մասնագետ ներգրավելու

նպատակով, սակայն այդպես էլ չի հաջողվել ներգրավել պահանջարկ ունեցող մասնագետին, քանի որ, շատ դեպքերում մասնագետները հրաժարվում են Գյումրիում աշխատելու առաջարկից:

Այս կապակցությամբ, թերևս պետք են ավելի բարձր կառավարչական ապարտների աջակցությունն ու միջնորդությունը:

Եվ վերջապես, բուժսարքավորումների սպասարկման որևէ ընկերության գործունեությունը մարզում, և հատկապես Գյումրի քաղաքում, ևս կնպաստեր կազմակերպության կողմից ծառայությունների անխափան մատուցմանը, կվերացներ տեղափոխման համար անհրաժեշտ ծախսերը:

Սակայն այս պարագայում ևս «Գյումրի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության կոմից անհնար է որոշ մեխանիզմների ներդրումը, կամ որևէ քայլերի ձեռնամուխ լինելը:

Այս պարագայում ևս պետք է դրսևորել սպասողական վիճակ՝ մինչ նմանատիպ որևէ ընկերության հիմնումը Գյումրի քաղաքում: